**ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/3-2**

ք. Գավառ «____» փետրվարի 2026 թ.

Գավառի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի, որը գործում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և և «ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Թաթուլ Գափոյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:
2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:
2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 780000 (յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:
Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:
Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:
4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:
Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը

կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը

հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 5/հինգ/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Գավառի համայնքապետարան
1201, ք.Գավառ, Գր. Լուսավորչի 12
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900172510019
ՀՎՀՀ 08425757

**Գ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ** ________________
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ
1201, ք.Գավառ, Ազատության 2,
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2471800010720000
ՀՎՀՀ 08409435

**Թ.ԳԱՓՈՅԱՆ** __________________
/ստորագրություն/
Կ.Տ.

*Հավելված N 1*
*«        » փետրվարի  2026 թ. կնքված*
*ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/3-2 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**Չափաբաժին 3**

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 3 | 71241200/3 | Տես ստորև | դրամ | 780000 | 1 | ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12 | Պայմանագրի կնքման օրվանից 40 օրացուցային օր |

| | | |
|---|---|---|
| | Օբյեկտի համառոտ նկարագիրը (փաստացի վիճակը), տեղակայման վայրը | **Գավառ համայնքի Կարմիրգյուղ բնակավայրում կամուրջի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ** |
| | Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը | Նախատեսվում է Կարմիրգյուղ բնակավայրում իրականացնել կամուրջի կառուցում<br>- Ըստ պատվիրատուի պահանջի նախատեսել երկաթբետոնյա կոնստրուկցիաներով կամուրջի կառուցում՝ իրականացնելով նոր հիմքեր,<br>-Նախքան նախագծումը, անհրաժեշտ է, պատվիրատուի և կատարողի համատեղ ուժերով կատարել օբյեկտի տեղազննում,<br>- Նախագծողի ուժերով կատարվում է ինժեներաերկրաբանական ուսումնասիրություն և գեոդեզիական հանույթ: |
| | Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ | **Հիմնավորում՝**<br>Համայնքային բյուջեի ծրագիր 2026թ.<br>**Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝ ելակետային տվյալներ**<br>-ճարտարապետահատակագծային առաջադրանք,<br>-նախագծային առաջադրանք (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ),<br>-չափագրություններ,<br>**Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝**<br>**1) Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝**<br>- ճարտարապետահատակագծային առաջադրանք և տեխնիկական պայմաններ,<br>- ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացություն (ծեռք է բերում նախագծողը),<br>- նախագծային առաջադրանք (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ),<br>- հանույթ,<br>- չափագրություններ,<br>- ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ՝ եթե այդպիսիք անհրաժեշտ են (բնապահպանություն, մշակույթ) /ձեռք է բերում ծառայություններ մատուցողը/:<br>**2) նորմատիվային պահանջներ**<br>- ՀՀ կառավարության 19.03.2015թ. «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և |

| | | |
|---|---|---|
| | | ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-Ն որոշում,<br>- ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014 թվականի <ՀՀՇՆ 30-01-2014 <Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում> շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին> N263-Ն հրաման,<br>- ՀՀ ԿԱ ՔՊԿ նախագահի 05.04.2018թ <Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին> թիվ 43-Ա հրաման,<br>- ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.02.2006թ ՀՀՇՆ II-6.02-2006 <Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր> թիվ 24-Ն հրաման,<br>- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի <ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՍՆ 3.02-05-2003) <Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար> շինարարական նորմերի հաստատման մասին> N253-Ն հրաման,<br>- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունիսի 16-ի <Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը հաստատելու մասին> N 41-Ն հրաման,<br>- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի փետրվարի 2-ի <Քաղաքաշինական փաստաթղթերի մշակման (ծրագրային և ճարտարապետաշինարարական) արժեքի հաշվարկման կարգը հաստատելու մասին> N 19-Ն հրաման,<br>- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի <ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածուն հաստատելու մասին> N09-Ն հրաման,<br>- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի ապրիլի 9-ի <Հանրակրթական նշանակության շենքեր> N 103-Ն հրաման,<br>- ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի <Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006թվականի նոյեմբերի 29-ի N273 -Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին> N128-Ն հրաման,<br>- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2016 թվականի հունիսի 16-ի <ՀՀՇՆ 24-01-2016 <Ջերմային պաշտպանություն> շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում լրացում կատարելու մասին> N 120-Ն հրաման,<br>- ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի ապրիլի 13-ի <ՀՀՇՆ 22-03-2017 <Արհեստական և բնական լուսավորում> շինարարական նորմերը հաստատելու, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու և մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին> N 56-Ն հրաման,<br>- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի <Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին> N 526-Ն որոշում,<br>- ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի <Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին> N 392-Ն որոշում,<br>- ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի <Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական |

| | | |
|---|---|---|
| | | հաստատություններին ներկայացվող պահանջներ> N2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և ՀՀ առողջապահության նախարարի 2002թվականի փետրվարի 11-ի N82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին> N 12-Ն հրաման,<br>- ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի <Նախադպրոցական կազմակերպությունների /հիմնարկների/ N2.III.1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին> N 857 հրաման,<br>- ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի <Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին> N 1504-Ն որոշում,<br>- ՀՕ-110-Ն 2014թվականի հունիսի 21-ի <Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին> ՀՀ օրենք,<br>- <Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին> ՀՀ օրենք,<br>-- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի <Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին> N 438 որոշում: |
| | Նախագծման փուլերը | **Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝**<br>ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ N 128-Ն հրամանի համաձայն Նախագծային աշխատանքների իրականացում **«Նախագիծ»** և **«Աշխատանքային փաստաթղթեր»** փուլերով<br>(այդ թվում՝ **Էսքիզային նախագիծ**՝ ծավալատարածական և ճարտարապետահատակագծային լուծումները պատվիրատուի և իրավասու մարմնի հետ նախապես համաձայնեցնելու նպատակով) |
| | Նախագծի կազմը | **«Նախագիծ»** և **«Աշխատանքային փաստաթղթեր»** **<u>փաթեթի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր</u>**<br>1. **Ընդհանուր բացատրագիր**<br>2. **Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ** (կամ հողամասի գլխավոր հատակագիծ)<br>3. **Ճարտարապետաշինարարական մաս**<br>4. Ծավալահատակագծային լուծումներ, մասնագրեր և հանգույցներ<br>5. **Կոնստրուկտիվ մաս**<br>6. Կոնստրուկտիվ լուծումներ,<br>7. կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն<br>**8.** **Ինժեներական** (ներքին և արտաքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր)<br>**9.** Ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն<br>10. Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ<br>11. Շինարարության կազմակերպման նախագիծ<br>12. Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ<br><br>**Համաձայնեցումներ**<br>*<u>Նախագծի համաձայնեցում</u>*<br>13. Համայնքի ղեկավարի հետ,<br>14. Տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ համաձայնեցնել պահուստի, լցակայտի և շինարարական աղբի տեղերը,<br>15. Կոմունիկացիաների /ջրագծի, գազատարի, կապի մալուխի, հոսանքի գծեր և այլն/ նախագիծը համաձայնեցնել իրավասու շահագրգիռ մարմինների հետ: |

| | | |
|---|---|---|
| | Այլ պահանջներ | ***Եզրակացություններ***<br>Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում<br>**Փորձաքննություններ**<br>քաղաքաշինական պարզ փորձաքննությունների ապահովում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով<br>**Շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ**<br>-նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ,<br>-նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ,<br>Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշները՝ դրանք ներկայացնելով առանձին ցանկով:<br>**Շինարարական հրապարակի կազմակերպման նկատմամբ** շինարարական արտադրության կազմակերպման նախագծում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջների ամրագրում.<br>**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**<br>Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում<br>**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ**<br>Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով:<br>Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 3 օրինակ՝ փաստաթղթային և էլեկտրոնային՝ AUTO CAD և PDF, նախահաշիվը՝ EXCEL տարբերակներով՝ լրացված միավորի գներով:<br>ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետ.<br>նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը՝<br>ա. շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի և սույն կարգի 22-րդ կետով նախատեսված պահանջներին համապատասխան՝ դրանք ներկայացնելով առանձին ցանկով,<br>բ. ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,<br>գ. ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,<br>դ. պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով.<br>Ե.ներկայացնում է աշխատանքների կատարման համար անհրաժեշտ մեքենամեխանիզմների, աշխատանքնային ռեսուրսների և պահանջվող լիցենզիաների ցանկը: |
| | | **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ)**<br>Ծառայությունների մատուցման ժամանակահատվածը նախատեսել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ **40 օրացուցային օր**՝ ըստ կից ներկայացված օրացուցային գրաֆիկի:<br>**ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ** |

| | | |
|---|---|---|
| | | Ըստ անհրաժեշտության ***(եթե համալիր (այդ թվում պարզ) փորձաքննության արդյունքներով փրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման»),*** նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում: |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Գավառի համայնքապետարան
1201, ք.Գավառ, Գր. Լուսավորչի 12
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900172510019
ՀՎՀՀ 08425757

**Գ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ** ________________
/ստորագրություն/

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ
1201, ք.Գավառ, Ազատության 2,
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2471800010720000
ՀՎՀՀ 08409435

**Թ.ԳԱՓՈՅԱՆ** ________________
/ստորագրություն/

Կ.Տ.

*Հավելված N 2*
*«          » փետրվարի 2026 թ. կնքված*
*ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/3-2 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 3 | 71241200/3 | Գավառ համայնքի Կարմիրգյուղ բնակավայրում կամուրջի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ | - | 780000 | 780000 | 780000 | 780000 | 780000 | 780000 | 780000 | 780000 | 780000 | 780000 | 780000 | 780000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Գավառի համայնքապետարան
1201, ք.Գավառ, Գր. Լուսավորչի 12
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900172510019
ՀՎՀՀ 08425757

**Գ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ** ____________________
/ստորագրություն/

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ
1201, ք.Գավառ, Ազատության 2,
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2471800010720000
ՀՎՀՀ 08409435

**Թ.ԳԱՓՈՅԱՆ** ____________________
/ստորագրություն/

Կ.Տ.

*Հավելված 3*
*«  »  20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________________ | ______________________________ |
| ____________________________ | ______________________________ |
| գտնվելու վայրը _____________ | գտնվելու վայրը _________________ |
| hh _________________________ | hh____________________________ |
| hվhh _______________________ | hվhh___________________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_______________________________________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  » «  » 20  թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ____________________________ | ____________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________________ | ____________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«        »              20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը                                                   Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20      թ. _____________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                                    պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20  թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ______________________________<br>ազգանուն, անուն | ______________________________<br>ազգանուն, անուն |
| ______________________________<br>ստորագրություն | ______________________________<br>ստորագրություն |

*Հավելված N 4*
*«         »              20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

______________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ________________________-ի և ____________________-ի միջև «--»         20  թ. կնքված
պատվիրատուի անվանումը                              կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_________________-ի      միջև  «--»   20  թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____________________________________________          _____________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»          20  թ.